ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ՇՄՆ-ԲՆ-ԱՊՁԲ-24/14» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան «10» «մայիսի» 2024թ.

ժամը 15:00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Գ.Շահնազարյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Լ.Ավետիսյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Ս.Ավագյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Ա.Դպիրյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Լ.Սինանյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Մ.Այդինյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Լ.Զոհրաբյան

1. «ՇՄՆ-ԲՆ-ԱՊՁԲ-24/14» ծածկագրով մրցույթի հայտերի գնահատման նպատակով նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

1.1. «ՇՄՆ-ԲՆ-ԱՊՁԲ-24/14» ծածկագրով մրցույթի նիստը կայացել է 2024 թվականի մայիսի 10-ին, ժամը 15:00-ին, հասցեն՝ շրջակա միջավայրի նախարարության շենքում (հասցեն՝ ք.Երևան, Կառավարական տուն 3, 5-րդ հարկ 529 սենյակ):

2. «ՇՄՆ-ԲՆ-ԱՊՁԲ-24/14» ծածկագրով մրցույթի մասնակցի կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրի թարգմանության վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն մինչև հանձնաժողովի նիստը գնահատող հանձնաձողովին է ներկայացրել տեխնիկական բնութագրի հայերեն լեզվով թարգմանությունը:

3. Տեղեկատվություն՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացված շտկված ապրանքի ամբողջական նկարագրի մասին

3.1. «ՓԻԷՖ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին:

3.2. «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա անհամապատասխանություններն են՝

3.2.1. Մրցույթի տեխնիկական բնութագրում նշված է եղել, որ չափվող միացությունների սարքավորումները, ծրագրային ապահովումը և չափաբերման սարքավորումները պետք է մատակարարվեն նույն արտադրողից, սակայն մասնակիցը նշել է, որ մատակարարումը կատարվելու է երեք տարբեր արտադրողներից՝ SO_2, CO, CO_2, NO_x, O_3 չափվող միացությունների չափումների համար առաջարկում է Teledyne API-ի կողմից արտադրված սարքավորումները, $PM_{2.5}$ -ի և PM_{10} -ի համար առաջարկում է MetOne ֆիրմայի BAM 1020 սարքավորումները, իսկ ծրագրային ապահովումը՝ «ԿՄՊ-ՍՈՖՏ» ՍՊԸ-ի արտադրանք հանդիսացող Ecological Software System-էկոլոգիական տվյալների հավաքագրման և հրապարակման համակարգը:

3.2.2. Մրցույթի տեխնիկական բնութագրում նշված է եղել, որ բոլոր անալիզատորները հաստատված լինեն US-EPA-ի կողմից և համապատասխանեն EN ստանդարտներին, սակայն մասնակցի ներկայացրած սարքավորումները համապատասխանում են միայն ամերիկյան ստանդարտին:

3.2.3. Ներկայացված MetOne ֆիրմայի BAM 1020 սարքավորումները չունեն PMI չափման հնարավորություն, իսկ տարանջատված մասնիկների $PM_1/PM_{2.5}/PM_{10}$ կոնցետրացիաների չափման համար առաջարկված Teledyne T640 և Palas FIDAS 200 սարքավորումների աշխատանքային մեթոդը՝ օպտիկական լույսի ցրման, չի համապատասխանում տեխնիկական բնութագրում նշված մեթոդին (Beta Ray Attenuation):

3.3. ARMGATE SIA-ի ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա են անհամապատասխանություններ՝

3.3.1. Մրցույթի տեխնիկական պահանջում նշված է եղել, որ չափվող միացությունների սարքավորումները, ծրագրային ապահովումը և չափաբերման սարքավորումները պետք է մատակարարվեն նույն արտադրողից, սակայն մասնակիցը նշել է, որ մատակարարումը կատարվելու է երկու տարբեր արտադրողներից՝ SO_2, CO, CO_2, NO_x, O_3 չափվող միացությունների չափումների համար առաջարկում է ACOEM-ի կողմից արտադրված սարքավորումները, իսկ $PM_1/PM_{2.5}/PM_{10}$ -ի համար առաջարկում է Palas FIDAS 200 E սարքավորումը:

3.3.2. Մրցույթի տեխնիկական պահանջում նշված է եղել, որ $PM_1/PM_{2.5}/PM_{10}$ կոնցենտրացիաների չափումը պետք է իրականացվի Beta Ray Attenuation մեթոդով, սակայն ներկայացված սարքավորումը չափումներն իրականացնում է այլ մեթոդով (օպտիկական լույսի ցրման մեթոդով):

4. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

4.1. «ՇՄՆ-ԲՆ-ԱՊՁԲ-24/14» ծածկագրով մրցույթի մասնակիցների ներկայացված գնային առաջարկների և ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի արդյունքում մասնակիցների զբաղեցրած տեղերը՝ առաջին տեղ զբաղեցնող ճանաչել «ՓԻԷՖ Գրուպ» ՍՊԸ-ին:

5. Հանձնաժողովը որոշեց՝

(Գ.Շահնազարյան)

5.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 42-րդ կետը և Հրավերի 1-ին մասի 8.10 կետը՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի և ARMGATE SIA-ի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը՝ «ՓԻԷՖ Գրուպ» ՍՊԸ-ն, ում հայտը համապատասխանում է հրավերի պահանջին:

5.2. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ՇՄՆ-ԲՆ-ԱՊՁԲ-24/14» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչել «ՓԻԷՖ Գրուպ» ՍՊԸ-ին:

5.3. Պայմանագրի կնքման նպատակով «ՇՄՆ-ԲՆ-ԱՊՁԲ-24/14» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակցին անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել, օրենքով և հրավերով սահմանված ժամկետում ներկայացնել՝

ա) պայմանագրի կատարման ապահովում բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով՝ գնման գնի 10 տոկոսի չափով և

բ) որակավորման ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով՝ գնման գնի 30 տոկոսի չափով:

5.4. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

5.5. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Գ.Շահնազարյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Լ.Ավետիսյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Ս.Ավագյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Ա.Դպիրյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Լ.Սինանյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Մ.Այդինյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Լ.Զոհրաբյան